ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ

# ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2011

ԿՐԿՆՕՐԻՆԱԿ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ

# ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



II
Ա 97750

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
73

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
73

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2011

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՏԴ 01:941 (479.25)
ԳՄԴ 91.9:63+63.3(2Հ)
Ղ154

Վլադիմիր Ղազախեցյան

Ղ154 Կենսամատենագիտություն: Պատմ. ինստ. հրատ., 2011.-38 էջ.-
(«Մեսրոպ արք. Աշճեան» մատենաշար, 73):

Գրքույկն ամփոփում է անվանի պատմաբան Վլադիմիր Ղազախեցյանի գիտական գործունեության կենսամատենագիտությունը:

ISBN 978-99941-73-56-3

ՀՏԴ 941 (479.25):22
ԳՄԴ 63.3(2Հ)+86.3

©Պատմության ինստիտուտ, 2011

# ՂԱԶԱԽԵՑՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՆԱՀԱՊԵՏԻ
## ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1926 թ. փետրվարի 11-ին Հայաստանի Ղարաքիլիսա գյուղաքաղաքում (այնուհետև քաղաք Կիրովական, այժմ Վանաձոր): Ծնողներն զբաղվել են գյուղատնտեսությամբ: Ընտանիքում մեծացել են 6 երեխաներ՝ 5 տղա, մեկ աղջիկ: Երեք տղաները մասնակցել են Հայրենական պատերազմին, նրանցից 2-ը չեն վերադարձել:

Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրում, դպրոցն ավարտելով 1944 թ., 1-ին կարգի դիպլոմով: 1944-1949 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, ավարտել «գերազանցությամբ» դիպլոմով: Եղել է ֆակուլտետի ուսանողական գիտական խորհրդի նախագահ: 1949-1952 թթ. ուսումնառություն է անցել հանրապետության գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայում, նորագույն պատմության մասնագիտությամբ, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի ղեկավարությամբ: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, «Հայկական ԽՍՀ-ը մեծ բեկման տարում» թեմայով: Դոկտորական ատենախոսություն է պաշտպանել 1976 թ., պաշտպանության ներկայացնելով «Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ.» մենագրությունը (Եր., 1975, 420 էջ): Պրոֆեսորի կոչում է ստացել 1982 թ., ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին կից Բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի որոշմամբ:

Աշխատանքային գործունեությունն սկսել է բուհում՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, որպես կուսակցության պատմության դասախոս՝ 1953-1959 թթ.: Այնուհետև փոխադրվել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, որպես նրա կադր ու մասնագետ: Համատեղության կարգով աշխատել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում՝ կուսակցության պատմության ամբիոնում, Երևանի Քվանտ վարժարանում որպես

պատմության ամբիոնի վարիչ, դասավանդելով Հայոց պատմություն: Պոլիտեխնիկական ինստիտուտում աշխատելու ժամանակ դասընթացների է մասնակցել Կիևի պետական համալսարանին կից դասախոսների վերապատրաստման ինստիտուտում, 1958 թ.:

1959 թ. մինչև այժմ աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, սկզբում որպես ավագ գիտական աշխատող, այնուհետև, 30 տարի շարունակ, 1980-2010 թթ., որպես նորագույն պատմության բաժնի վարիչ: Այժմ նույն բաժնում գլխավոր գիտական աշխատող է:

Վ. Ղազախեցյանի գիտական զբաղմունքի շրջանակներում են նորագույն պատմության հիմնահարցերը՝ ազգարային-գյուղացիական հարցը նախախորհրդային և խորհրդային ժամանակաշրջաններում, այդ ժամանակաշրջանների (առաջին և երկրորդ հանրապետությունների) համընդհանուր պատմության մշակում, հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին, դպրոցական դասագրքերի պատրաստում, մասնակցություն հայոց պատմության 8 և 4 հատորյակների ստեղծմանը, գրողներ Եղիշե Չարենցի և Ակսել Բակունցի կյանքի ու գործունեության էջերի լուսաբանությունը և այլն: Նրա գիտական գործունեության արդյունքները ամփոփված են շուրջ 30 գրքերում և ավելի քան 100 հոդվածներում, չհաշված շուրջ մեկ տասնյակ անտիպ տարբեր ստեղծագործությունները:

Վ. Ղազախեցյանի գիտական գործունեությանը բնորոշ է խստապահանջությունը և բարեխիղճ մոտեցումը պատմական ճշմարտությանը: Դա վերաբերվում է նաև խորհրդային ժամանակաշրջանի գիտական մշակումներին:

Չնայած խորհրդային պատմագրությանը հատուկ է եղել իրականության կեղծումը և գունազարդումը, այնուամենայնիվ Վ. Ղազախեցյանի մոտ ձգտումը պատմական ճշմարտությանը արտահայտություն է գտել բավական զգալիորեն: Եվ դա շնորհիվ այն բանի, որ հեղինակը ջանացել է հասնել արխիվային

նյութի և այլ աղբյուրների լայն օգտագործմանը, և ապահովել առաջադրած հարցերի բազմակողմանի քննարկումը: Պետք է խոստովանել, և չափազանցություն չի լինի նշել, որ մեր հեղինակը լավագույնս է տիրապետում Հայաստանի արխիվներին, որի շնորհիվ նրա գիտական գործերը աչքի են ընկնում արխիվային փաստաթղթերի ու նյութերի հարստությամբ, դրանցից բխող ընդհանրացումներով ու եզրակացություններով:

Մեծ է Վ. Ղազախեցյանի ներդրումը ժամանակակից պատմագրության մեջ: Անկախ պետականության հաստատման շնորհիվ փակ արխիվների ու ֆոնդերի բացումը լայն հնարավորություններ ստեղծեց պատմական գիտության զարգացման համար: Վ. Ղազախեցյանը առաջիններից մեկը նվիրվեց ուսումնասիրելու և գիտական շրջանառության մեջ դնելու պետական անվտանգության մարմինների, դատախազության, արտաքին գործերի նախարարության և այլ արխիվային ֆոնդերի փաստաթղթերը, որը մեծապես բարձրացրեց պատմական իրականության ճշմարտացի վերարտադրման մակարդակը, ինչպես նաև հետաքրքրությունը պատմական գրականության նկատմամբ:

Ագրարային-գյուղացիական հիմնախնդրի վերաբերյալ պետք է հիշատակել նրա հետևյալ երեք նշանավոր գրքերը. խորհրդային (նախակոլտնտեսային և կոլտնտեսային) գյուղացիության պատմությանը նվիրված երկու ծավալուն մենագրությունները և Հայաստանի առաջին հանրապետության տարիների ագրարային-գյուղացիական հարցին նվիրված ուսումնասիրությունը: Ուշագրավ է այն հետազոտությունը, որ իրականացրել է հեղինակը՝ վերարտադրելու համար 1920-ական թվականների հայկական գյուղի ընդհանուր պատկերը, մասնավորապես սոցիալական հարաբերությունների դրությունը: Համադրվել և վերլուծության են ենթարկվել բազմաբնույթ վիճակագրական տվյալներ և այլ կարգի նյութեր, հեղինակին բերելով հիմնավոր եզրակացության՝ Հայաստանի գյուղը գտնվել է սոցիալ-տնտե-

սական առավել հետամնաց վիճակում, խիստ մեծ է եղել չքավոր գյուղացիության տեսակարար կշիռը, որ նման պայմաններում գյուղացիության համար փրկարար նշանակություն է ունեցել նոր տնտեսական քաղաքականությունը (ՆԷՊ)՝ նյութական շահագրգռության արմատավորումը գյուղացիական տնտեսության մեջ: Շահագրգռության, ինչպես նաև գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպման փորձի լուսաբանումը մեծ նշանակություն ունի նաև այսօր՝ Հայաստանի Հանրապետության գյուղի զարգացումը ուղղորդելու, գյուղացուն օգնության հասնելու գործում:

Գիտական գործունեության երկարամյա փորձի արդյունք է Վ. Ղազախեցյանի նշանավոր մենագրություններից մեկը՝ «Հայաստանը 1920-1940 թթ.» ծավալուն ուսումնասիրությունը: Վերջինիս առավելություններից է նորահայտ նյութերի, մասնավորապես Արտակարգ հանձնաժողով-Պետական քաղաքական վարչության փաստաթղթերի վրա հենվելը, փաստաթղթեր, որոնք, որոշ ժամանակաշրջանի համար, օժտված են մեծ հավաստիությամբ: Գրքում տեղ գտած նորություններից է Հայաստանում ստալինյան քաղաքական բռնությունների հետևանքների, ինչպես նաև նախկին (1918-1920 թթ.) բանակի սպաների հետապնդման հարցերի բարձրացումը: Նորովի լուսաբանություն են ստացել կուսակցական աստիճանակարգության (նոմենկլատուրա), կոմունիստական կուսակցության կողմից խորհուրդների իշխանության յուրացման, բռնի կոլեկտիվացման դեմ գյուղացիության դիմադրության կամ, այսպես կոչված, «Բանդիտական շարժման» և այլ հարցեր: Ընդ որում, նորովի լուսաբանությունը վերաբերվում է ոչ միայն տվյալ, այլև հեղինակի ամբողջ ժամանակակից գործունեությանը, ընդհանրապես, երբ պատմական գիտությունը միանգամից ձերբազատվեց խորհրդային ժամանակաշրջանի կուսակցական-գաղափարական կապանքներից ու պարտադրանքներից:

Ընդգծելի է Վ. Ղազախեցյանի մասնակցությունը Հայոց պատմության նոր բազմահատորյակի 4-րդ հատորի ստեղծման գործում, որի 1-ին գրքի ծավալի զգալի մասի հեղինակը հենց նա է:

Զգալի է Վ. Ղազախեցյանի ներդրումը դպրոցական դասագրքերի պատրաստման գործում: Նա է առաջինը հանրապետությունում դպրոցական դասագրքի համար մշակել Հայաստանի առաջին հանրապետության և Խորհրդային Հայաստանի առաջին տասնամյակների պատմությունը, որը, նախ, տեղ է գտել 9-րդ դասարանի նորագույն ժամանակաշրջանի պատմության ձեռնարկում, այնուհետև 8-րդ (այժմ 9-րդ) դասարանների դասագրքում, և որը վերահրատարակվել է բազմիցս: Բուհ ընդունվող դիմորդների համար է ստեղծվել ամբողջական Հայոց պատմության ձեռնարկը:

Հայրենական պատերազմի պատմության բնագավառում հատկապես պետք է արժևորել Վ. Ղազախեցյանի՝ պարտիզանական պայքարին նվիրված գործերը: Այդ թեմայով գրքերից մեկն ընդգրկում է հայ պարտիզանների ու ընդհատակյինների գործունեությունը թշնամու կողմից օկուպացված ԽՍՀՄ տարածքներում և եվրոպական երկրներում:

Կարելի է անդրադառնալ նաև որոշ հայ գրողների, հատկապես Եղիշե Չարենցի և Ակսել Բակունցի կյանքի ու գործունեության լուսաբանությանը, որին վերաբերվում են հեղինակի 10-ից ավելի հոդվածներ ու հրապարակումներ: Ե. Չարենցի մասին հեղինակի նյութը մեծ բանաստեղծի 1926-1927 թթ. Երևանի «ուղղիչ տանը» գտնվելու մասին է: Անհանգիստ ու հախտոն բնավորության տեր Չարենցը դժբախտություն է ունեցել, հոգեկան ծանր ապրումների պահին, կրակելու օրիորդ Մ. Ա.-ի վրա, նրան պատճառելով, բարեբախտաբար, թեթև վնասվածք, և որի համար բանաստեղծը դատապարտվեց: «Ուղղիչ տանը» ավելի ծանրացավ Չարենցի հոգեկան խռովքը, վտանգ ստեղծելով նրա առողջության ու

կյանքի համար: Հայաստանի իշխանությունները, անձամբ Ասքանազ Մռավյանը (լուսժողկոմ) և Աշոտ Հովհաննիսյանը (ՀԿ (բ)Կ կենտկոմի քարտուղար) մտահոգված էին բանաստեղծին փրկելու, օրինական հիման վրա նրան բանտից դուրս բերելու հարցով:

Ավելի լայն ու ընդարձակ է Ակսել Բակունցին ներկայացնող հոդվածաշարը: Այստեղ առկա է գյուղատնտես Բակունցը՝ որպես Զանգեզուրի գավառի գյուղատնտես և ՀՍԽՀ հողժողկոմատի գյուղատնտեսական վարչության պետի տեղակալ: 1923-1924 թթ. Բակունցի դերն օգտագործվել է ընդհատակ անցած ՀՅ Դաշնակցության և դաշնակցական երիտասարդական միության (դաշերիտմիություն) վերացման նպատակով: Ուսումնասիրվել է այն հարցը, թե Բակունցը եղե՞լ է արդյոք դաշնակցականների կուսակցության անդամ: Ա. Բակունցը ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանի կինոյի գործերին, որտեղ պետք է հատկապես նշել «Զանգեզուր» կինոնկարի սցենարի, մասնավորապես նրա ռուսերեն տարբերակի մշակումը Մոսկվայում, կինոյի մասնագետների միջավայրում: Հատուկ ուսումնասիրվել է նախախորհրդային մամուլում Ակսել Բակունցի տպագրած հոդվածների խնդիրը, որպիսիք կրում են տարբեր ստորագրություններ, նաև հապավումների ձևով:

Վերջապես, նշենք Բակունցի «Էրիմենյան մանրէ», մինչև այսօր չգտնված, գրական ստեղծագործության մասին, որը հայտնի դարձավ անմիջապես Բակունցին պատկանող փաստաթղթի միջոցով (հրապարակումով):

Գրողներից հեղինակը անդրադարձել է նաև Ավետիք Իսահակյանին: 1918 թ., երբ Իսահակյանը գտնվում էր Շվեյցարիայում, Գերմանիա մեկնած հայկական պատվիրակության ղեկավար Համո Օհանջանյանը գրավոր դիմել է նրան՝ իր հեղինակությունը և դիրքն օգտագործել գերմանական կառավարության մոտ՝ հայկական գործերին նպաստավոր լուծում տալու

համար: Մի շարք փաստաթղթեր վկայում են դրանցում Ավ. Իսահակյանի գործուն մասնակցության մասին:

Վ. Ղազախեցյանի գիտական գործունեության մեջ տեղ ունի աղբյուրագիտական բնույթի գրքերի ու հոդվածների տպագրությունը: Եզակի է խորհրդային իշխանության պայմաններում (1920-ական և 30-ական թվականների սկիզբ) Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության կազմակերպությունների դրությանը և դրանց դեմ կոմունիստական կուսակցության պայքարին նվիրված փաստաթղթերի ժողովածուի հրապարակումը և այլ բազմաթիվ գործեր: Հայաստանի առաջին հանրապետությանը նվիրված փաստաթղթերի ծողովածուն, որը պատրաստող խմբի ղեկավարը եղել է Վ. Ղազախեցյանը, կարևոր աղբյուր է այդ պետականության պատմությունը ուսումնասիրողների համար: Ժողովածուն տվյալ հիմնահարցին նվիրված առաջին տպագրություններից է Հայաստանում:

Վ. Ղազախեցյանը մասնակցություն է բերել հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ ու տեսաբան Գարեգին Նժդեհի գործունեության ուսումնասիրությանը՝ ինչպես փաստաթղթերի հրապարակումով, այնպես էլ գիտահետազոտական աշխատանքով (Նժդեհի երկերի երկհատորյակ, մարտական հրամաններ, Զանգեզուրի ինքնապաշտպանություն և այլն):

Բազմաթիվ նորություններ են պարունակում հեղինակի հոդվածները, սակայն, դրանց անդրադառնալն այստեղ նպատակահարմար չենք համարում:

Առանձին բնագավառ է արխիվներում հայտնաբերված գիտական աշխատությունների տպագրության նախապատրաստումը: Այդպիսի գործերից հիշատակության արժանի է Աստվածատուր Խաչատրյանի 1918 թ. հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունները ներկայացնող գիրքը, որում հեղինակը լուսաբանել է 1918 թ. Հայաստանի Հանրապետության հռչակմանն առնչվող հարցեր (աշխատությունը գրվել է 1919-1920 թթ., Ալ. Խատիսյանի հանձնարարությամբ): Գրքում ներկա-

յացված է Վ. Ղազախեցյանի ընդարձակ հոդվածը, որը պատմում է գրքի հեղինակի մասին, ինչպես նաև զարգացնում գրքում բարձրացված գիտական հարցերը: Այն տպագրվել է 2010 թ.:

Հրատարակության համար պատրաստվել է համանման մեկ այլ մենագրություն՝ անկախության հռչակման պահից մինչև խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանի Հանրապետության դիվանագիտության պատմությանը նվիրված Միքայել Թումանյանի գիրքը (ռուսերեն): Այս երկու ձեռագիր աշխատություններն էլ պահվում են Հայաստանի ազգային արխիվում և հրատարակության են պատրաստվել Ազգային արխիվի հետ համատեղ:

Հիշված գրքի հեղինակ Միքայել Թումանյանը ծագում է Վրաստանի Թումանյանների իշխանական գերդաստանից և 1918-1920 թվականներին եղել է Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության խորհրդականը: Ուսումնասիրությունը գրվել է 1920-ական թվականների առաջին տարիներին: Հեղինակը բավական հանգամանորեն հետազոտել է Հայաստանի դիվանագիտական հարաբերությունները աշխարհի բազմաթիվ երկրների հետ, իր ձեռքի տակ ունենալով փաստաթղթերի ամբողջ թղթապանակներ: Այս գրքի համար ևս որպես առաջաբան Վ. Ղազախեցյանը պատրաստել է հոդված դիվանագետ Միքայել Թումանյանի մասին:

Գիտական գործունեությանը զուգընթաց վերջին 30 տարում (1980-2010 թթ.) Վ. Ղազախեցյանը ղեկավարել է պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժինը: Վերջինս զգալի հաջողություններ է ձեռք բերել այդ ժամանակամիջոցում: Նախ՝ բաժնի վարիչը նպաստել է, որ բաժնի կոլեկտիվի համար գոյություն ունենան նորմալ աշխատանքային-ստեղծագործական պայմաններ, բարյացակամ մթնոլորտ և փոխհարաբերություններ բաժնի անդամների միջև: Բաժնի աշխատողների կողմից մշակվել են նորագույն ժամանակաշրջանի պատմության բազմաթիվ թեմաներ, պաշտպանվել

թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ, հրատարակության երաշխավորվել և տպագրվել նրանց գիտական գործերը:

Բաժնի արդյունավետ գործունեության լավագույն ցուցանիշ է Հայոց պատմության բազմահատորյակի 4-րդ հատորի ստեղծումը, որի 1-ին գիրքը տպագրվել է 2010թ.: Այն տվյալ բազմահատորյակի առաջին տպագրությունն է: Հատորը պատրաստող հեղինակների ճնշող մասը բաժնի աշխատողներն են, որոնց հետ համագործակցել են այլ գիտական հիմնարկների մասնագետներ: Բաժնում քննարկվել և ընդունվել են հատորի բոլոր հեղինակների տեքստերը: Հատորում ներկայացված են ժամանակակից պատմագրության նվաճումները:

Բաժինը քննարկել և արժևորել է նորագույն պատմության գծով այն բոլոր ատենախոսությունները, որոնք հրապարակային պաշտպանության են ներկայացվել պատմության ինստիտուտի գիտական խորհրդին: Այդ կապակցությամբ բաժնի վարիչի կողմից գիտական խորհրդի համար պատրաստվել են տասնյակ կարծիքներ ու եզրակացություններ, այսինքն նա գործուն մասնակցություն է ունեցել հանրապետության պատմաբան կադրերի պատրաստմանն ու կատարելագործմանը: Նույն կարգով գործակցել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի հետ, որպես շրջանավարտների դիպլոմային թեմաների կատարման ղեկավար, ինչպես նաև ավարտական քննությունների պետական հանձնաժողովի նախագահ: Հանդես է եկել որպես բազմաթիվ թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունների պաշտպանության պաշտոնական ընդդիմախոս: Երկար տարիներ եղել է պատմության ինստիտուտի ատենախոսությունների պաշտպանության գիտական խորհրդի, ինչպես նաև ինստիտուտի ընդլայնված գիտական խորհրդի անդամ:

Ձեկուցումներ է ունեցել պատմության և գրականության ինստիտուտներում, նախկին կուսակցության պատմության

ինստիտուտում, Վանաձորի մանկավարժական ինստիտուտում, ինչպես նաև Հայաստանի սահմաններից դուրս՝ Մոսկվայում, Ուֆայում, Ֆրունզեում (Բիշկեք): Զեկուցումները (հաղորդումները) կամ դրանց թեզիսները հիմնականում տպագրվել են: Որպես նախկին «Գիտելիք» ընկերության անդամ զեկուցումներով հանդես է եկել աշխատավորական կոլեկտիվներում, նաև հեռուստատեսությամբ ու ռադիոյով:

Անկուսակցական է: Անցյալում եղել է կոմունիստական կուսակցության անդամ, ինստիտուտի կուսակցական բյուրոյի քարտուղար:

Ամուսնացած է, ունի մեկ աղջիկ և երկու տղա- թոռներ:

Համլետ Հարությունյան
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի նորագույն պատմության բաժնի վարիչ

# I. Գրքեր

## ա. Մենագրություններ և փաստաթղթերի ժողովածուներ

1. Սովետական Հայաստանը մեծ բեկման տարում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1962, 184 էջ:

2. Էջմիածնի շրջանի N 3 սովխոզը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1964, 141 էջ:

3. Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը, «Հայաստան» հրատ., Ե., 1965, 109 էջ:

4. Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1975, 410 էջ:

5. Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը (1929-1937), ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 321 էջ:

6. Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստ. և նյութերի ժողովածու), պատ. խմբ. և կազմող պրոֆ. Վ. Ն. Ղազախեցյան, Ե., 1999, 370 էջ:

7. Նժդեհը Զանգեզուրում. 1920 թ. վերջ – 1921 թ. հուլիս, Զանգակ հրատ., Ե., 2001, 108 էջ:

8. Հայ պարտիզանները, Ե., «Զանգակ» հրատ., 2004, 157 էջ:

9. 1937-ը Հայաստանում, Ե., «Զանգակ» հրատ., 2004, 73 էջ (ռուս. և անգլ. ամփոփում):

10. 1937-ը Հայաստանում, Ե., «Զանգակ» հրատ., Ե., 2005, 2-րդ հրատ., 75 էջ (ռուս. և անգլ. ամփոփում):

11. Հողային հարցը և հողային բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում (1918-1920 թթ.), Ե., 2005, 95 էջ:

12. Հայաստանը 1920-1940 թթ., Ե., 2006, 563 էջ: (Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար, 14):

## բ. Դասագրքեր

13. Հայոց պատմություն. 1900-1939 թթ. (նյութեր 9-րդ դասարանի համար), Ե., «Լույս» պետ. հրատ., 1993, հեղինակ՝ էջ 113-271:

Հայաստանի Հանրապետությունը (1918-1920 թթ.), էջ 113-182:

Խորհրդային Հայաստանը և Հայկական Սփյուռքը 1920-1939 թթ., էջ 183-271:

14. Հայոց պատմություն. 7-8-րդ դասարանների դասագիրք, խմբ. Վ. Բարխուդարյան, Միտք հրատ., Ե., 1994, հեղինակ՝ էջ 235-333, 416-438:

15. Հայոց պատմություն. դասագիրք հանրակրթական դպրոցի 7-8-րդ դասարանների համար, Վ. Բ. Բարխուդարյանի խմբագրությամբ, երկրորդ հրատ., Ե., «Լույս», 1996: Հեղինակ. էջ 235-325, 416-438:

16. Հայոց պատմություն. դասագիրք հանրակրթական դպրոցի 7-8-րդ դասարանների համար, Վ. Բ. Բարխուդարյանի խմբագրությամբ, երրորդ հրատ., Ե., Լույս, 1997, համահեղինակ:

17. Հայոց պատմություն. ձեռնարկ դպրոցների աշակերտների և բուհերի դիմորդների համար, Քվանտ վարժարան, Ե., 1997, 359 էջ:

18. Հայոց պատմություն. հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք, խմբագրությամբ պրոֆ. Վ. Բարխուդարյանի, Ե., Լույս, 1998, հեղինակ. էջ 24-102, համահեղինակ՝ էջ 165-184 (Կ. Խուդավերդյանի հետ):

19. Հայոց պատմություն. հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք, խմբ. պրոֆ. Վ. Բարխուդարյանի, Ե., Լույս, 2000, հեղինակ. էջ 6-79, 136-152:

20. Խորհրդային Հայաստանը 1920-1930-ական թվականներին.- «Պատմություն», դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար, գլ. 17 (էջ 200-212), Ե., 2001:

21. Հայ մշակույթի պատմությունը դպրոցական դասագրքերում, էլեկտրոնային ձեռնարկ (տպագիր տարբերակ), «Քվանտ» վարժարան, 2003 թ., 97 էջ: Համահեղինակ և գլխավոր խմբագիր:

22. Հայոց պատմություն. նորագույն շրջան, դասագիրք 9-րդ դասարանի համար, խմբ. Վ. Բարխուդարյան, Ե., 2008, հեղինակ՝ էջ 41-94:

## գ. Համատեղ աշխատություններ

23. Գիրք հերոսների մասին, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1964, 450 էջ (16 ակնարկի հեղինակ):

24. Սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման առաջին քայլերը Հայաստանում. – Հայ ժողովրդի պատմություն, հ. VII, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1967, հեղինակ՝ էջ 251-288:

25. Հայ ժողովրդի պատմություն, հ VIII, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1970, հատորի խմբագրության անդամ և «Վերջաբանի» (էջ 526-531) հեղինակ:

26. Սոցիալ-տնտեսական վերափոխումները Սովետական Հայաստանի գյուղում. – Մեծ Հոկտեմբերի ուղիով, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1977, էջ 220-237 (համահեղինակ Գ. Գեղամյան):

27. Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ.: Փաստ. և նյութեր. - ԲՀԱ, 1993, թիվ 1-2, էջ 22-391: Համակազմող, խմբագիր և առաջաբանի (էջ 24-29) հեղինակ:

28. Լենինյան ազգային քաղաքականության կենսագործումը Հայաստանում. – Միասնական ընտանիքում. հոդվածների ժո-

ղովածու, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1982 թ., հեղինակ՝ էջ 120-156: Ժողովածուի համախմբագիր, Կ. Խուդավերդյանի հետ:

29. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստ. և նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, 455 էջ: Կազմողների խմբի ղեկավար և պատ. խմբագիր՝ Գ. Գալոյանի հետ:

30. Գարեգին Նժդեհ, Նամականի (1920-1921), Ե., հրատարակիչ՝ Ազգայնական Ակումբ, 2002, 45 էջ: Համլետ Գևորգյանի հետ «Երկու խոսքի» հեղինակ և հրատարակության պատրաստող:

31. Книга о героях. Изд. АН Арм. ССР, Е., 1985, 285 с. (Соавтор и отв. редактор).

32. Զանգեզուրի հերոսամարտը հրամաններում (1921 թ.), կազմողներ՝ Վ. Ղազախեցյան, Հ. Գևորգյան, խմբագիր՝ Ա. Հարությունյան, Ե., Հրատարակիչ՝ «Հայրենիք» ակումբ, 2008, 110 էջ:

Երկու խոսք. էջ 3-5 (Վ. Ղազախեցյան, Հ. Գևորգյան):

Ներածություն. էջ 6-14 (Վ. Ղազախեցյան):

Փաստաթղթեր. էջ 15-80:

Հավելված. էջ 81-110:

33. Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922-1929 թթ.), կազմողներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Մելքոնյան, պատմ. գիտ. դոկտոր Վ. Ն. Ղազախեցյան, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, 351 էջ, (գիրքը տպագրվել է պետական պատվերով):

34. Հայոց պատմություն. 4 հատորով, հ. IV, գիրք առաջին. Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Ե., 2010, 797 էջ: Հատորի պատասխանատու խմբագիր և հետևյալ էջերի հեղինակ՝ 52-61, 78-86, 289-312, 324-362, 367-380, 385-390, 393-402, 413-538, 588-594, 645-658:

## II. Հոդվածներ

### ա. Պատմագիտական ուսումնասիրություններ և հրապարակումներ

1. Հայկական ՍՍՀ առաջին հնգամյա պլանը և սոցիալիստական մրցումը արդյունաբերության մեջ. - Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու, N 15, 1957, էջ 127-155:

2. Կոլեկտիվացման նախապատրաստումը Հայաստանում 1928-1929 թթ. – Տեղեկագիր, 1959, N 5, էջ 39-48:

3. Սովխոզային շինարարությունը Հայաստանում 1921-1930 թթ. – Տեղեկագիր, 1961, N 3, էջ 3-14:

4. Организация армянского партизанского отряда в Житомирской области в 1943г.- Տեղեկագիր, 1962, N 1, էջ 3-16:

5. Գյուղի սոցիալիստական վերակառուցումը.- Երեկոյան Երևան, 5 նոյեմբերի 1970թ., N 276, էջ 2:

6. Նախակոլտնտեսային գյուղի ուսումնասիրման մեթոդոլոգիան.- Լրաբեր, 1971, N 6, էջ 3-14:

7. Փաստաթղթեր Սովետական Հայաստանի սովխոզային շինարարության վերաբերյալ (1920-1929թթ.).- ԲՀԱ, 1971, N 3, էջ 83-97:

8. Արխիվային նյութեր հայ պարտիզանների մասին.- ԲՀԱ, 1972, N 2, էջ 141-154:

9. Դարձյալ Սովետական Հայաստանի ագրարային վերափոխումների գնահատման հարցի առթիվ.- Լրաբեր, 1976, N 11, էջ 75-83:

Հ 97760 II

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

10. Կոլտնտեսությունների ամրապնդման առաջին միջոցառումները Հայաստանում.- Լրաբեր, 1978, N 8, էջ 3-10:

11. Պատմական էտապ սոցիալիզմի կառուցման գործում.- Հայաստանի գյուղատնտեսություն, 1979, N 5, էջ 21-22:

12. Մայիսյան ապստամբության պատմության էջերից.- ԲՀԱ, 1980, N 2, էջ 87-95:

13. Անխախտ դաշինքը գործողության մեջ.- Երեկոյան Երևան, 9 հոկտեմբերի 1980 թ., N 235, էջ 2:

14. Մ. Գ. Ներսիսյան (ծննդյան 70-ամյակի առթիվ).- Պատմաբանասիրական հանդես, 1980, N 4, էջ 269-272: Համահեղինակ Վազգեն Ոսկանյան:

15. Սովետական Միության մեր հերոսները. Ղնեպրը գետանցողների շարքում [Իվան Կոնստանդինի Շահումյան].- Սովետական Հայաստան, 22 սեպտեմբերի 1984 թ., N 222, էջ 4:

16. Հայ ժողովրդի մասնակցությունը սովետական վրիժառուների պայքարին Հայրենական մեծ պատերազմի տարիներին.- Լրաբեր, 1985, N 2, էջ 3-16:

17. Սովետական Միության մեր հերոսները. Հրանոթի հաշվարկի հրամանատարը [Վահիկ Հմայակի Լևոնյան].- Սովետական Հայաստան, 19 հունվարի 1985 թ., N 16, էջ 4:

18. О материальном ущербе, нанесенном армянскому народу в Закавказье и в Карсской области турецкими интервентами.- Լրաբեր, 1987, N 2, էջ 81-88:

19. Հայաստանի գյուղացիության պայքարը հողի համար 1917-1920 թթ.- Լրաբեր, 1987, N 11, էջ 34-47:

20. Ագրարային շարժումները Հայաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո (1917թ. նոյեմբեր – 1920 թ. հոկտեմբեր).- ԲՀԱ, 1987, N 2, էջ 38-54:

21. Материалы о борьбе крестьянства Ереванской губернии и Борчалинского уезда за землю накануне

Октябрьской революции (март –октябрь 1917 г.).- Լրաբեր, 1988, N 2, էջ 66-80:

22. 1917 թ. գյուղատնտեսական վիճակագրության մասին.- Լրաբեր, 1988, N 7, էջ 77-83:

23. Հայ ժողովրդի մեծագույն ազգային տոնը.- [Գրվել է Հայաստանի հեռագրական գործակալության պատվերով և տպագրվել Հայաստանի շրջանային թերթերում 1990թ. մայիսի 26-ի կամ 29-ի համարներում]:

24. Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը ականատեսի աչքերով.- Երեկոյան Երևան, 27 հուլիսի 1990 թ., N 167, էջ 3:

25. Թուրք-բոլշևիկյան դաշինքը և Հայաստանի Հանրապետության անկումը.- Գրական թերթ, 21 սեպտեմբերի 1990 թ. N 31, էջ 4: Համահեղինակ՝ Արարատ Սարգսյան:

26. Թուրք-խորհրդային արշավանքը. ինչու կործանվեց Հայաստանի Հանրապետությունը.- Հայք, 26 սեպտեմբերի 1990 թ., N 33, էջ 4: [Հեղինակի ստորագրությունը դուրս է մնացել շարվածքից]:

27. Ալեքսանդրապոլի պայմանագիրը.- Գրական թերթ, 14 դեկտեմբերի 1990 թ., N 51, էջ 4:

28. Երկու զեկուցագիր Զանգեզուրի հարավային շրջանների պատմական անցյալից.- ԲՀԱ, 1990, N 1, էջ 141-157:

29. Ստալինյան փաստաթուղթ ռեպրեսիաների ծավալման մասին..- Հայացք, 1990, N 11, էջ 73-79:

30. Հայ սպաների աքսորը (զանգվածային բռնաճնշումների առաջին գործողությունը).- Հայաստանի Հանրապետություն, 30 ապրիլի 1991 թ., թիւ 96, էջ 3:

31. Сегодня – день независимости Республики Армении.- Голос Армении, 28 мая 1991г., N 95, с. 1.

32. Լենինը և ընկ.գերմանական գործակալներ.- Երեկոյան Երևան, 23 հուլիսի 1991 թ., N 141, էջ 3:

33. Ազգային հարցի պատմությունից. Ինքնավարացման ստալինյան ծրագիրը.- Քաղաքական զրուցակից, 1991, N 9, էջ 16-21:

34. Հայոց զորքը 1918-1920 թթ.- Հայք, 21 մարտի 1992 թ., N 11, էջ 6, 8:

35. Մեր անկախ Հայաստանի Հանրապետությունը. - 02. Ոստիկանական լրատու, 28 մայիսի 1993., N 15, էջ 1-2:

36. Հայաստանի Հանրապետությունը (պատմության համառոտ ուրվագիծ).- Միտք («Ազատամարտի» գիտատեսական հավելված), 1993, թիւ Ե (մայիս), էջ գ-ե և թիւ Զ (օգոստոս), էջ գ-է:

37. 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության բանակը և կարգապահության խնդիրը.- Ձինվոր, 1993, N 8, 21-31 հուլիսի և N 9, 20-30 օգոստոսի:

38. Лев и орел – символы силы, духа и власти.- Республика Армения, 30 марта 1994г., N 56, с. 4 [Հարցազրույց]:

39. Հայկական հարցը Հայաստանի Հանրապետության տարիներին (1918-1920), Ազդակ, 24 ապրիլի 1999, բացառիկ, էջ 18-24:

40. Գարեգին Նժդեհի բանտարկությունը, Նախիջևան, Գ տարի, 2001թ., մարտ, թիվ 19, էջ 7:

41. Հայ տարագիրները և Նժդեհը Պարսկաստանում 1921 թ., Նախիջևան, Գ տարի, 2001 թ., մայիս, թիվ 20, էջ 8-9:

42. Ալեքսանդրապոլի ազատագրումը թուրքական օկուպացիայից (1921 թ. ապրիլ), «Պատմություն» (հանդես), թիվ 1, 2002 թ., էջ 77-86:

43. Հայաստանի Հանրապետության իշխանությունը Լեռնային Ղարաբաղում և Զանգեզուրում, ԲՀԱ, N 1, 2003թ., էջ 37-46:

44. Դաշնակցության կողմից փետրվարյան ապստամբության ղեկավարման հարցի շուրջ (նորահայտ վավերագիր), ԲՀԱ, N 1, 2003 թ., էջ 46-50: Համահեղինակ Հ. Գևորգյան:

45. Հայ սպաների աքսորը 1920-1921 թթ.- ԲՀԱ, N 2, 2003 թ., էջ 32-51:

46. Շնորհավորում եմ, ԲՀԱ, 80 տարի, N 1, 2004 թ., էջ 6-7:

47. Խորհրդային հայ պարտիզանները- Հայկական բանակ, ՀՀ պաշտ. նախար. ռազմագիտ. հանդես, 2005, N 2-4, Հատուկ թողարկում, Մեծ հաղթանակ. 1941-1945, էջ 58-80:

48. Советские партизаны – армяне.- Айкакан банак (Спец. выпуск военнонаучного журнала мин. об. РА "Айкакан банак" (Армянская армия), 2005г., май, с. 58-80.

49. Դրոյի նամակը Սիմոն Վրացյանին.- ԲՀԱ, 2006, N 1, էջ 129-142: Համահեղինակ Համլետ Գևորգյան:

50. Զանգեզուր-Ղարաբաղի ինքնապաշտպանության պատմության մեկ դրվագի շուրջ (կոմունիստ Երեմիա Բակունցի մասին).- ԲՀԱ, 2006, N 1, էջ 251-266:

51. Հայկական միացյալ պատվիրակության գործունեությունը Լոզանի կոնֆերանսում (1922-1923 թթ.).- ԲՀԱ, N 1-2, 2007, էջ 98-120:

52. Հայրենադարձության կազմակերպման հարցի շուրջ.- ԲՀԱ, N 1, 2008, էջ 127-136:

53. Սփյուռքում խորհրդային իշխանության քաղաքականության հարցի շուրջ.- ԲՀԱ, N 2, 2008թ., էջ 109-124:

54. Չեկա-ՊՔՎ-ի նյութերը որպես խորհրդային պատմության ուսումնասիրության աղբյուր.- ԲՀԱ, N 1, 2009, էջ 47-56:

55. Արտակարգ հանձնաժողովի տեղեկատվական գործունեության սկիզբը Հայաստանում, ԲՀԱ, N 1, 2010, էջ 72-86:

56. ա. Համլիկ Թումանյանի նամակը Ալեքսանդր Մյասնիկյանին.- ԲՀԱ, 2010, N 2, էջ 132-136:

56 բ. Խորհրդային Միության հայ հերոսների ցանկի պատրաստում՝ Երևանի Հաղթանակի զբոսայգում «Հերոսների ծառու-

ղի» կառուցապատելու նպատակով (ՀԿԿ կենտկոմի և Երևանի քաղաքային կոմիտեի պատվերով):

## Բ. Հայ գրողների կյանքի ու գործունեության էջեր

57. Ակսել Բակունցը և Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ-ը).- Լրաբեր, 1979, N 6, էջ 102-105:

58. Նորահայտ վավերագրեր.- Գրական թերթ, 1979, 15 հունիսի, N 24:

59. Ակսել Բակունցը գյուղատնտես (ծննդյան 80-ամյակի առթիվ).- Հայաստանի գյուղատնտեսություն, 1979, N 6, էջ 31-32:

60. Ակսել Բակունցի գործունեությունը ՀՍԽՀ հողժողկոմատի կոլեգիայում (1925-1928 թթ.).- ԲՀԱ, 1979, N 2, էջ 90-100:

61. Բակունց Ակսել. Երկեր չորս հատորով, հ. IV, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1984 [Բնագրերը պատրաստող և ծանոթագրող համահեղինակ, հատորի շուրջ մեկ քառորդ մասի նյութերի տրամադրող]:

62. Չարենցը նորահայտ վավերագրերում (1927 թ. հունվար-փետրվար).- Գրական թերթ, 25 օգոստոսի 1989 թ., N 35, էջ 2:

63. Չարենցի կյանքի էջերից.- Գրական թերթ, 18 մայիսի 1990 թ., N 21, էջ 3-4: Համահեղինակ՝ Սերգեյ Աճեմյան:

64. Եղիշե Չարենցը Երևանի ուղղիչ տանը.- ԲՀԱ, 1990, N 2, էջ 113-126:

65. Երկու նամակ Ավետիք Իսահակյանին. Նորք, 1997, թիվ 2, էջ 105-109:

66. Եղիշե Չարենցի կյանքի էջերից (1926-1927թթ. Բանտային օրեր), Նորք, 1997, թիվ 4, էջ 62-67:

67. Ակսել Բակունցը իր «Էրիմենյան Մանրէ» անտիպ գրական երկի մասին, Գրական թերթ, 1-15 ապրիլի 1999 թ., N 7, էջ 2:

68. Ակսել Բակունցը և կինոն.- Գրական թերթ, 1-15 հուլիսի 1999 թ., էջ 10-11:

69. Ակսել Բակունցը նախախորհրդային մամուլում. Նորք, 1999, թիվ 2, էջ 3-33:

70. Ակսել Բակունցի կուսակցականության հարցի շուրջ, ԲՀԱ, 80 տարի, N 1, 2004թ., էջ 60-75:

71. Аксел Бакунц. Зангезур. Авторский сценарий.- ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ: ՀՀ Գրողների միություն. Գրականագիտական հանդես, Ե., 2004, Բ, էջ 209-227, Ե., 2005, Ա, էջ 168-181:

[Ա. Միկոյանի նամակը ՀԿ (բ) Կ կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանին (1935 թ., ռուս.) «Պեպո» կինոնկարի մասին Ի. Ստալինի կարծիքը: Նամակի քննարկման արդյունքում ստեղծվել է Ա. Բակունցի «Զանգեզուրը» կինոսցենարը: Նամակը տե՛ս. Գրականագիտական հանդես, Ե., 2004, Բ, էջ 208-209]:

## գ. Զեկուցումներ

72. Проблемы аграрной истории советского общества. Материалы научной конференции 9-12 июня 1969 г., Изд. "Наука", М., 1971, с. 86. [Խորհրդային Հայաստանում ագրարային վերափոխումների մի քանի առանձնահատկությունների մասին, հաղորդում]:

73. Գյուղատնտես Հովսեփ Աթաբեկյան. կյանքը և գործունեությունը.

Զեկուցում կարդացված 1970 թ. ՀԿԿ կենկոմին կից կուսակցության պատմության ինստիտուտի հոբելյանական նստաշրջանում:

2001 թ. տպագրության համար հանձնվել է Զանգակ հրատարակչության «Պատմություն» հանդեսի խմբագրությանը: (N 1-ից հետո հանդեսի տպագրումը դադարեցվել է):

74. Միջազգային ագրարային սեմինար. (2 էջ): [Կայացել է Ֆրունզեում (Բիշկեք) 1971 թ. օգոստոսի 23-28, գրվել է տեղեկատվության համար]:

Պահվում է հեղինակի անձնական արխիվում:

75. Ագրարային վերափոխումների փորձը Սովետական Հայաստանում՝ զեկուցում կարդացված 1971 թ. օգոստոսին Ֆրունզեում կայացած միջազգային ագրարային սեմինարում.- Լրաբեր, 1972, N 3, էջ 107-111:

76. Подъем колхозно-совхозного производства Армении в 1946-1971 гг.- Проблемы истории современной советской деревни 1946-1973 гг. М., 1975, с. 272-275.

77. Об основных вопросах подготовки к изданию документов по колхозному и совхозному строительству в Армянской ССР.

[Զեկուցում կարդացված Մոսկվայում ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի Գլխավոր արխիվային վարչության կոնֆերանսում 1981 թ. հոկտեմբերին: Զեկուցումը չի պահպանվել]:

78. Общественно-политическая жизнь армянского села в переходный период.- XXVI съезд КПСС и проблемы аграрной истории СССР (социально-политическое развитие деревни). XIX сессия Всесоюзного симпозиума по изучению проблем аграрной истории. Тезисы докладов и сообщений. Уфа, 30 сентября – 3 октября 1982г. М., 1982, с. 47-49.

79. Հայ-ռուսական հարաբերությունները Մոսկվայի և Կարսի կոնֆերանսների ժամանակաշրջանում (1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. հոկտեմբեր).- Հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցեր (նյութերի ժողովածու), Ե., 1998, էջ 119-138. [Զեկուցում կարդացված 1997թ. հոկտեմբերին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում կայացած գիտաժողովում,

նվիրված հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցերին]:

80. ա/ Աշոտ Հովհաննիսյանը և խորհրդահայ մշակույթը.- Լրաբեր, 2000, թիվ 2, էջ 16-22:

[Զեկուցում՝ նվիրված Աշոտ Հովհաննիսյանի ծննդյան 110-ամյակին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում կազմակերպված գիտաժողովում: (1997)]:

80. բ/ Հայ հեղափոխական դաշնակցությունը խորհրդային իշխանության պայմաններում.- Հայ հեղափոխական դաշնակցության հիմնադրման 115 և 120-ամյակին նվիրված գիտաժողովների նյութեր., Եր., 2011, էջ 67-75:

## դ. Հանրագիտարանային հոդվածներ

81. Բաղիրով (Բաղիրյան) Ռուբեն Քրիստափորի.- ՀՍՀ, հ. 2, Ե., 1976, էջ 256:

82. Բոստանջյան Միհրան Միհրանի.- ՀՍՀ, հ. 2, Ե., 1976, էջ 522:

83. Բրոդի,- ՀՍՀ, հ. 2, Ե., 1976, էջ 571-572:

84. Գյուղացիություն,- ՀՍՀ, հ. 3, Ե., 1977, էջ 131-134: Համահեղինակ:

85. Եղիազարյան Թադևոս Արշակի.- ՀՍՀ, հ. 3, Ե., 1977, էջ 505:

86. Զաքարյան Վաղինակ Սիմոնի.- ՀՍՀ, հ. 3, Ե., 1977, էջ 675-676:

87. Կոլտնտեսությունների համագումարներ 1928, 1931 Հայաստանում,- ՀՍՀ, հ. 5, Ե., 1979, էջ 519:

88. Կովպակ Սիդոր Արտեմովիչ.- ՀՍՀ, հ. 5, Ե., 1979, էջ 637:

89. Կուլակություն.- ՀՍՀ, հ. 5, Ե., 1979, էջ 715:

90. Հարվածային կոլտնտեսականների համագումարներ 1933, 1969 Հայաստանի.- ՀՍՀ, հ. 6, Ե., 1980, էջ 313:

91. Ղրիմի օպերացիա 1944.- ՀՍՀ, հ. 7, Ե., 1981, էջ 49-50:

92. Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատ.- ՀՍՀ, հ. 7, Ե., 1981, էջ 543:

93. Նաումով Միխայիլ Իվանովիչ.- ՀՍՀ, հ. 8, Ե., 1982, էջ 210:

94. Նովոռոսիյսկ – Թամանի օպերացիա.- ՀՍՀ, հ. 8, Ե., 1982, էջ 345-346:

95. Նովոռոսիյսկի պաշտպանական օպերացիա,- ՀՍՀ, հ. 8, Ե., 1982, էջ 346:

96. Չքավոր գյուղացիություն.- ՀՍՀ, հ. 9, Ե., 1983, էջ 73-74:

97. Պարտիզանական շարժում Հայրենական մեծ պատերազմում (1941-45 թթ.).- ՀՍՀ, հ. 9, Ե., 1983, էջ 213-215: Համահեղինակ Ե. Խալեյան:

98. 41-րդ պարտիզանական ջոկատը.- ՀՍՀ, հ. 12, Ե., 1986, էջ 418-419:

99. Սովետական Հայաստան. պատմություն. ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921-1925 թթ.).- ՀՍՀ, հ. «Սովետական Հայաստան», Ե., 1987, էջ 167-168:

100. Սովետական Հայաստան. պատմություն. Սոցիալիստական շինարարության ծավալումը և սոցիալիզմի հաղթանակը (1926-1941թթ.).- ՀՍՀ, հ. «Սովետական Հայաստան», Ե., 1987, էջ 168-172:

101. Սովետական Հայաստան. պատմություն. ՀՍՍՀ Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.),- ՀՍՀ, հ. «Սովետական Հայաստան», Ե., 1987, էջ 173-176:

102. Սովետական Հայաստան. պատմություն. ՀՍՍՀ սոցիալիզմի ամրապնդման և հետագա զարգացման ժամանակաշրջանում (1946-1961թթ.).- ՀՍՀ, հ. «Սովետական Հայաստան», Ե., 1987, էջ 176-180:

103. Փետրվարյան ապստամբություն. 1921.- Հայկական համառոտ հանրագիտարան, չորս հատորով, հ. 4, Ե., 2003, էջ 841-842:

104. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. 7-պատմությունը.- Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, Հանրագիտարան, Ե., 2004, էջ 232-244: Համահեղինակ:

## III. Քարտեզներ

1. Հայկական դիվիզիաների մարտական ուղին 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում.- Հայ ժողովրդի պատմություն, հ. VIII, Ե., 1970, 74-75 էջերի միջև (անստորագիր):

2. Միկոյանի անվան և «Հաղթանակ» հայկական պարտիզանական ջոկատների մարտական ուղին.- Հայ ժողովրդի պատմություն, հ. VIII, Ե., 1970, 134-135 էջերի միջև (անստորագիր):

3. Социалистическое преобразование сельского хозяйство.- Атлас сельского хозяйства Армянской ССР, Ер.-М., 1984, с. 83. Համահեղինակ՝ Քնարիկ Պետրոսյան:

4. 1917թ. Հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանում և Անդրկովկասը.- Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Ե., 2008, էջ 96:

## IV. Գրախոսություններ

### ա. Հեղինակի գրախոսություններ

1. Հ. Ֆելեքյան, Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում.- Լրաբեր, 1970, N 3, էջ 97-99:

2. Հ. Ռ. Մելիքսեթյան, Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980թթ.).- Լրաբեր, 1986, N 8, էջ 90-93:

3. Վ. Ա. Հակոբյան, Սոցիալական փոփոխությունները Հայկական ՍՍՀ գյուղում զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում.- Լրաբեր, 1986, N 5, էջ 83-85:

## բ. Հեղինակի գրքերի մասին

4. Պ. Ղազարյան, Պարտիզանական ջոկատի սխրանքները.- Լենինյան ուղիով, 1966, N 12, էջ 94-96:

5. Э. Базинян, Века и годы [Քաղվածքներ հեղինակի «Էջմիածնի շրջանի N 3 սովխոզը» գրքից].- Комсомолец, 21 июня 1979 г.

6. Ս. Ա. Ալլահվերդյան, Գրախոսություն [Վ. Ն. Ղազախեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ.», Ե., 1975, 410 էջ - Լրաբեր, 1975, N 12, էջ 107-108:

7. Ս. Ա. Ամիրյան, Առաջին լուրջ փորձը [Վ. Ն. Ղազախեցյանի «Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թվականներին», Ե., 1975, 410 էջ, գրքի մասին].- Լենինյան ուղիով, 1976, N 1, էջ 90-93:

8. Հովիկ Մելիքսեթյան, Նոր գիրք գյուղացիության պատմության մասին.- Սովետական Հայաստան, 11 հոկտեմբերի 1975 թ., էջ 4:

9. Ա.Շահնազարյան, Արժեքավոր մենագրություն.- Հայաստանի գյուղատնտեսություն, 1975, N 12, էջ 37:

10. Գ. Գաբրիելյան, Արժեքավոր մենագրություն.- Հայաստանի գյուղատնտեսություն, 1979, N 7, էջ 35-36:

11. Գևորգ Յազըճյան, Նժդեհագիտական հրատարակությունները շարունակվում են [Վ. Ղազախեցյանի «Նժդեհը Զանգեզու-

ռում. 1920 թ. վերջ – 1921 թ. հուլիս», Ե., 2001, գրքի մասին].- Ազգ, 13 դեկտեմբերի 2001 թ.:

## V. Անտիպ աշխատություններ

1. Институт повышения квалификации при Киевском государственном университете.

Защита и дальнейшее развитие Компартией Ленинской теории социалистической революции в годы социалистического строительства в СССР (доклад), Киев, 1958 г., 42 с.

Պահվում է հեղինակի անձնական արխիվում: Բացի սույն տեսական զեկուցումից, ըստ ունկնդիրների համար նախատեսված պլանի, գրվել է նաև մեկ դասախոսության տեքստ Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի պատմության թեմայով, որը, սակայն, չի պահպանվել:

2. Լոմաշվիլի Պ. Ն., «Մեծ հեղաշրջում», Սաբչոտա Սաքարթվելո, Թբիլիսի, 1972, ռուսերեն: [Գրախոսություն, 15 էջ, չի տպագրվել ուշացնելու պատճառով]:

Պահվում է հեղինակի անձնական արխիվում:

3. Սովխոզային շինարարությունը Հայաստանում (1921-1977 թթ.) (պլան-պրոսպեկտ փաստաթղթերի ժողովածուի). 4 էջ, 25 նոյեմբերի 1977 թ.:

Պահվում է հեղինակի անձնական արխիվում:

4. Սովխոզային շինարարությունը Հայաստանում (1920-1960 թթ.) [մենագրություն], 186 մեքենագիր էջ:

Պահվում է հեղինակի անձնական արխիվում:

5. Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում. 4 էջ, 29 ապրիլի 1970 թ. [Գրվել է Հայկական հեռագրական գործակալության պատվերով և ներկայացվել]:

Պատճենը պահվում է հեղինակի անձնական արխիվում:

6. Հայաստանը սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում. 17 էջ, 18 հունիսի 1978 թ.: Գրվել է հեռուստատեսության պատվերով:

Պահվում է հեղինակի անձնական արխիվում:

7. Պարտիզան Արտեմ Պետրոսյան (Ալ. Հովհաննիսյանի և Ռուսակի «Մորավիայի արծիվը» գրքի քննարկման առթիվ): Քննարկումը կազմակերպել էր «Լենինյան ուղիով» ամսագրի խմբագրությունը, որտեղ և գտնվել է շուրջ 2 մամուլ ծավալով հոդվածը: Խմբագրության ֆոնդում (ՀԱԱ) չի հայտնաբերվել:

8. Միութենական սերիա. Սովխոզային շինարարությունը Հայաստանում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, Մինիստրների խորհրդին կից արխիվային վարչություն. կազմողների խմբի ղեկավար և պատասխանատու խմբագիր, ծավալը շուրջ 20 մամուլ: Չի պահպանվել:

9. Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը (1929-1937 թթ.). ՀԽՍՀ ԳԱ հրատ., Ե., 1978, 19 էջ [գրվել է ՀԽՍՀ ԳԱ ինֆորմացիայի սեկտորի պատվերով]:

Պատճենը պահվում է հեղինակի անձնական արխիվում:

10. Всесоюзная серия: Коллективизация сельского хозяйства в Армянской ССР (1927-1937 гг.) Сб. док. и мат. Инст. Истории АН Арм. ССР и Гл. арх. упр. при СМ Арм. ССР.

Կազմողների խմբի ղեկավար և պատասխանատու խմբագիր: Ծավալը շուրջ 25 մամուլ:

Մեկ օրինակը պահվում է Վ. Ղազախեցյանի անհատական ֆոնդում՝ 1104, Հայաստանի ազգային արխիվում:

11. Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ժողովուրդների քառահատոր պատմություն, հ. 4-րդ (ռուս.):

Գլ. 6 – Խորհրդային Հայաստանը սոցիալիզմի տնտեսական հիմքի ստեղծման ժամանակաշրջանում (1926-1932) – 51 էջ (մեքենագիր, հայ.):

Գլ. 7 – Խորհրդային Հայաստանը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումն ավարտելու ժամանակաշրջանում (1933-1937 թթ.) – 64 էջ (մեքենագիր, հայ.):

Գլ. 9 – Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում: Հայկական ԽՍՀ սոցիալիստական հանրապետություն – 17 էջ (մեքենագիր, հայ.):

Գտնվում են հեղինակի անձնական արխիվում: (Անդրկովկասի ժողովուրդների ընդհանուր պատմության ստեղծման ու հրատարակման ծրագիրը ձախողվել է):

12. Երկհատոր Հայոց պատմության ռուսերեն տարբերակի 2-րդ հատորի համար 1920-1940 թթ. պատմությունը՝ շուրջ 70 էջ (2010 թ. ):

## VI. Ատենախոսություններ

### ա. Պաշտպանած ատենախոսություններ

1. Սովետական Հայաստանը մեծ բեկման տարում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1962, 184 էջ: 1953 թ. ձեռագիր տարբերակը պաշտպանվել է որպես պատմ. գիտ. թեկնածուի աստիճանի ատենախոսություն:

2. Армянская ССР в год великого перелома. Автореферат диссертации на соискание уч. степ. канд. ист. наук, Ер., 1953. На правах рукописи.

3. История крестьянства Советской Армении в 1920-1929 гг. Диссертация на армянском языке. Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук, Ер., 1975, 84 с. На правах рукописи.

4. Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1975, 410 էջ:

Գիրքը, որպես պատմ. գիտ. դոկտորի աստիճանի ատենախոսություն, պաշտպանվել է 1976 թ.:

## բ. Պաշտոնական ընդդիմախոսություն

5. Հայրապետյան Սերգեյ. Հայաստանի՝ ազգաբնակչության ապրելակերպը 1960-1980-ական թվականներին (պատմաքննական վերլուծություն). դոկտոր. ատեն. Փետրվար, 1993 թ.:

6. Հակոբյան Արարատ. Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920 թթ.: Դոկտ.ատեն.: Հոկտեմբեր, 1998 թ.:

7. Քառյան Սամսոն. Հայաստանի առաջին հանրապետության պատմության պատմագրությունը: Դոկտ. ատեն.: Հունիս, 2003 թ.:

8. Մինասյան Էդիկ. Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում 1990-ական թվականներին: Դոկտ. ատեն: Դեկտեմբեր, 2003 թ.:

9. Մելքոնյան Էդուարդ. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն: Դոկտ. ատեն.: Նոյեմբեր, 2005 թ.:

10. Շիրինյան Լևոն. Ժամանակակից երկրաքաղաքական (գեոպոլիտիկական) տեսությունները և արդի Հայաստանի երկրառազմավարության (գեոստրատեգիայի) գերակայությունները: Դոկտ. ատեն. Օգոստոս, 2006 թ:

11. Միրզոյան Սուրեն. Հայ ժողովրդի զավակները Ստալինգրադի ճակատամարտում: Թեկն. ատեն.:

12. Ֆելեքյան Հարություն, Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում (1920-1940 թթ.), դոկտ. ատեն.:

13. Абрамян Эдуард, Создание и применение Кавказских формирований Вермахта, канд. дис., ноябрь 2007 г.

14. Տակայուկի Յոշիմուրա (Ճապոնիա). դոկտ. ատեն. պատրաստման ոչ պաշտոնական խորհրդատվություններ (ատենախոսության ճապոներեն տպագիր օրինակը (2010թ.) տե՛ս հեղինակի անձնական արխիվ):

## գ. Ատենախոսների գիտական ղեկավար

15. Բաղալյան Արմեն, Ռազմաքաղաքական դրությունը Զանգեզուրում 1918-1921 թթ., պաշտ. 1998 թ. նոյեմբերի 6:
16. Գևորգյան Էդիկ, Հայաստանի գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ստեղծումն ու զարգացումը սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում (1921-1937 թթ.), պաշտ. 1987 թ. դեկտեմբերի 18:
17. Դալլաքյան Վիկտոր, ՀՍՍՀ բանվոր դասակարգի պետական գործունեությունը սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում (1926-1937 թթ.):
18. Զատիկյան Հովհաննես, Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը 1918-1920 թթ., պաշտ. 1996 թ. հուլիսի 2:
19. Հարությունյան Ավագ, Սևրը և հայ հասարակական-քաղաքական միտքը 1919-1920 թվականներին, պաշտ. 2005 թ. դեկտեմբերի 16:
20. Մանուկյան Արմենակ, Խորհրդային իշխանությունը և եկեղեցին Հայաստանում 1920-1940 թթ., պաշտ. 1997 թ. հոկտեմ- բերի 21:
21. Ստեփանյանց Ստեփան, Հայ առաքելական եկեղեցին 1920-1950-ական թթ., պաշտ. 1996 թ. հուլիսի 2:
22. Վարդանյան Գուրգեն, Կրթամշակութային կյանքը Հայաստանի Հանրապետությունում (1918-1920 թթ.), պաշտ. 2002 թ. հուլիսի 12:
23. Տոնոյան Ումրշատ, Խորհրդահայ կինեմատոգրաֆիայի կայացումը (1920-1930-ական թթ.), պաշտ.՝ 2002 թ. մայիսի 17:
24. Хачатурян Хачатур, Становление советского образа жизни (На материалах Армянской ССР), защ.- 24 февраля 1984г.

25. Սարգսյան Արարատ, Սովխոզային շինարարությունը Հայաստանում սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում, պաշտ. 1985 թ.:
26. Մանուկյան Հրաչիկ, Անդրկովկասի աշխատավորների ներդրումը Կովկասի պաշտպանության մեջ, պաշտ. 1986 թ. մարտի 7:
27. Հարությունյան Համլետ, Հայկական ԽՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում. քանակը, կազմը, ստեղծագործական ակտիվությունը, պաշտ. 1982 թ. հունվարի 26:

## VII. Խմբագրած աշխատություններ

1. Խուրշուդյան Լ. Ա., Հայաստանում սոցիալիստական մրցության պատմությունից (1928-1932), Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1961, 113 էջ:

2. Գեղամյան Գ. Մ., Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիզմի վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում (1946-1958 թթ.), Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, 229 էջ:

3. Հայ ժողովրդի պատմություն, հ. VIII. Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի և ետպատերազմյան կոմունիստական շինարարության տարիներին. 1941-1965, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1970, 579 էջ. հատորի խմբագրություն՝ Գալոյան Գ. Ա., Հակոբյան Ա. Մ. (պատ. խմբ.), Հարությունյան Ա. Բ. (Հարենց), Ղազախեցյան Վ. Ն.:

4. Կարապետյան Հ. Ս., Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի ձևավորումը և զարգացումը (1920-1940), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1980, 273 էջ: Համախմբագիր՝ Հ. Հ. Ազիզբեկյան:

5. Հարությունյան Հ. Մ., Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում (քանակը, կազմը), Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, 157 էջ:

6. Հարությունյան Հ. Մ., Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը (1938-1960 թթ.), Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 244 էջ:

7. Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. ՀՍՍՀ հաս. գիտ. գիտական ինֆորմացիայի կենտրոն. Մատենագիտական ժողովածու N 5, Ե., 1987, 114 էջ: Պատ. խմբագիր և «Առաջաբանի» (էջ 4-6) հեղինակ:

8. Хачатурян Х. В., Становление советского образа жизни в Армянской ССР, Ер., изд. АН Арм. ССР, 1988, 153 с.

9. Դալլաքյան Վ. Ե., Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունից (1920-1930-ական թթ.), Ե., Հայաստանի ԳԱ հրատ., 1991, 150 էջ:

10. Հայոց ազգային համախորհրդակցությունը. Թիֆլիս, 1917 թ. սեպտեմբեր – հոկտեմբեր, փաստաթղթեր ու նյութեր.- ԲՀԱ, 1992, թիվ 1-2, 178 էջ, խմբագիր:

11. Գևորգյան Է. Գ., Հայաստանի գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան 1920-1930-ական թթ., Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, 174 էջ:

12. Մելիքյան Վ. Հ., 1917 փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Ե., 1997, 319 էջ:

13. Пирумян Рубина, Армения в сфере отношений АРФ «Дашнакцутюн» - большевики (1917-1921), научн. ред. русского (доп. и испр.) изд., Эдит Принт, 2001, 265 с.

14. Գարեգին Նժդեհ, Երկեր, հ. 1, Ե., 2002, 528 էջ: Պատ. խմբագիր և «Առաջաբանի» (էջ 3-9) հեղինակ (առանց ստորագրության):

15. Գարեգին Նժդեհ, Երկեր, հ. 2, Ե., 2002, 504 էջ: Պատ. խմբագիր և «Երկու խոսքի» (էջ 3-7) հեղինակ (առանց ստորագրության):

16. Հարությունյան Ա. Ա., Սևրի պայմանագիրը և հայ հասարակական քաղաքական միտքը, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004, 138 էջ:

17. Մանուկյան Արմենակ, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2002, 189 էջ:

18. Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, Հանրագիտարան, Ե., 2004: Գիտախմբագրական հանձնաժողովի անդամ:

19. Հայոց պատմություն, 4 հատորով, հ.IV, գիրք առաջին, Ե., 2010, հատորի պատասխանատու խմբագիր:

20. Հայկական Սովետական Հանրագիտարանի Հայ ժողովրդի պատմության (նոր և նորագույն շրջան) գիտաճյուղային խորհրդի անդամ.- հհ. 5-12 և հ. «Սովետական Հայաստան», Ե., 1975-1987:

21. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991 թ. օգոստոս – 1992թ. հունվար). փաստաթղթեր, կազմող՝ Հրանտ Աբրահամյան: Ե., 2011, 195 էջ:

## VIII. Ձայնագրություն և տեսագրություն

1. Քվանտ վարժարան. Հայ մշակույթի պատմությունը դպրոցական դասագրքերում (էլեկտրոնային ձեռնարկ, տեսագրություն): Պահվում է հեղինակի անձնական արխիվում:

2. Հարցազրույց «Վեմ» ռադիոկայանին. 29 մայիսի 2002 թ.- Հանրապետության օրը (ձայնագրություն ժապավենի վրա): Պահվում է հեղինակի անձնական արխիվում:

3. Հարցազրույց «Վեմ» ռադիոկայանին. 16 հոկտեմբերի 2004 թ. - (Ձայնագրություն ժապավենի վրա): Պահվում է հեղինակի անձնական արխիվում:

4. Խոսք հեռուստատեսային կինոնկարում՝ Մեծ ճանապարհի սկիզբը, մաս 1-2, 3-4. «Երկիր – Մեդիա» հեռուստատեսային ալիք (տեսագրություն, DVD):

Պահվում է հեղինակի անձնական արխիվում:

## IX. Այլ հեղինակների ստեղծագործությունների հրատարակում

1. Հ. Քաջազնունի, Հայաստանի Հանրապետություն, Վարանդյան հրատ., Ե., 1993, 31 էջ: Առաջաբանի (էջ 5-9) հեղինակ և տեքստը հրատարակության պատրաստող:

2. Հայաստանի ազգային արխիվ: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ. Աստվածատուր Խաչատրյան Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Ե., 2010, 286 էջ: Կազմողներ և խմբագիրներ՝ Վ. Ն. Ղազախեցյան, Ա. Ս. Վիրաբյան, Ս. Ս. Միրզոյան.

Աշխատության իրադարձությունների ժամանակը և նրա հեղինակը. տե՛ս էջ 3-50՝ հեղինակ՝ Վ. Ղազախեցյան:

3. Национальный архив Армении. Институт истории НАН РА.

Микаел. Туманян Дипломатическая история Республики Армения в период с момента провозглашения независимости по день установления Советской власти.

Подготовили к изданию: Казахецян В. Н. (автор предисловия), Вирабян А. С., Мирзоян С. С. Պատրաստ է հրատարակության համար:

## X. Կենսագրական տեղեկություններ

1. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 7, Ե., 1981, էջ 17:

2. Գառնիկ Ստեփանյան, Կենսագրական բառարան, հ. Բ, Եր., 1981, էջ 232:

3. Վ. Դալլաքյան, Ա. Մարուքյան, Դարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը, Ե., 2008, էջ 281:

4. «Քվանտ» վարժարան. տասը տարվա ճանապարհ, Եր., 2002, էջ 32-33 («Պատմության ամբիոն», հայերեն և անգլերեն լեզուներով):

5. Հայկական հանրագիտարան հրատարակչություն. Ով ով է. Հայեր. Կենսագրական հանրագիտարան, հ. առաջին, Ե., 2005, էջ 692:

6. Երևանի պետական համալսարանի պատմության 90-ամյա ֆակուլտետը, Եր., 2009, էջ 363:

7. «Քվանտ» վարժարան. Ռ. Վարդանյան, Լ. Հակոբյան, Քսանամյա վերելք, Եր., 2011, էջ 70-71, 74:

8. Համլետ Հարությունյան, Վլադիմիր Նահապետի Ղազախեցյան. Կյանքը և գիտական գործունեությունը.- Տես Վլադիմիր Ղազախեցյան, Կենսամատենագիտություն սույն հրատարակությունը:

# ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ

# ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# ВЛАДИМИР КАЗАХЕЦЯН

# БИБЛИОГРАФИЯ


ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ՝ ԳԱՅԱՆԵ ԲՈԲՈԽՅԱՆ
ՇԱՐՎԱԾՔԸ՝ ԹԱՄԱՐԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ
ՏՊԱԳՐԻՉ՝ ԼԵՎՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

---

0019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24/4

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0223597

A II
97750